ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ե. Մուրադբեկյան

«01» 09 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ք.Երևան,Ավան

Թիվ 104 հիմնական դպրոց, 7ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Նավասարդյան Մարիամ Ռուբիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

7ա դասարանում սովորում են 35 աշակերտ՝ 18 տղա և 17 աղջիկ: Դասարանում ստեղծված է համերաշխ և ընկերասեր կոլեկտիվ: Աշակերտները պարտաճանաչ են, աշխատասեր, խելացի, հոգատար մեկը մյուսի նկատմամբ, ունեն պատասխանատվության զգացում: Ազնիվ են, արդարամիտ, կարգապահ: Բոլորն էլ գիտակցում են, որ իրենց համար կարևոր են գիտելիքներն ու ուսումը:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսումնական տարվա ընթացքում սովորողներին զինել գիտելիքներով, նրանց տալ հայեցի դաստիարակություն: Աշակերտների մեջ արթնացնել ազգային արժանապատվությունը: Առողջ դասարանական կոլեկտիվ ստեղծելու նպատակով աշակերտներին տալ բազմակողմանի դաստիարակություն: Այնպես անել, որ նրանք գիտակցեն, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն- Աշակերտների մեջ սեր առաջացնել հայրենիքի, նրա խորհրդանիշների նկատմամբ: Յուրաքանչյուրը պետք է գիտակցի իր տեղն ու դերը ընտանիքում, դպրոցում, դրսևորի արժանավայել պահվածք, լիմի մարդասեր, հանդուրժողական, հարգի իրենից մեծերին:

3.2 Գեղագիտականն դաստիարակություն – Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության ուղղությամբ: Սովորեցնել տեսնել, ընկալել, գնահատել գեղեցիկը, վեհը: Այցելել մշակութային կենտրոններ, կազմակերպել միջոցառումներ:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն – Ծանոթացնել հայ ռազմական արվեստին, մեր հերոսական պատմության նշանավոր գործիչների, Արցախյան ազատամարտի հերոսների կենսագրությանը: Նրանց օրինակով սերմանել հայրենասիրություն, քաջություն, ազատասիրություն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն – Կազմակերպել աշակերտների առողջության ամրապնդման ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ: Կարևորել մարմնակրթության դերը, հետևել առողջ ապրելակերպին:

3.5 Աշխատանքային դաստիարակություն – Աշակերտների մեջ սերմանել աշխատասիրության գաղափար, ձևավորել հարգանք աշխատանքի նկատմամբ: Աշխատանքային հարաբերություններում լինել բարեկիրթ, դրսևորել աշխատանքային ակտիվություն: Գնահատել սեփական և ուրիշների աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն- Դաստիարակել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, ձևավորել էկոլոգիական կուլտուրա: Կազմակերպել էքսկուրսիաներ:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ – Մշտական կապ հաստատել ծնողների հետ: Պարբերաբար անցկացնել զրույցներ հոգեբանական, մանկավարժական թեմաներով: Ծնողներին մասնակից դարձնել արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	Ով եմ ես	05.09.22թ	Դասղեկ
II	Ինչպիսին եմ ես	12.09.22թ	Դասղեկ
III	Ես և ուրիշները	19.09.22թ	Դասղեկ
IV	Ես քաղաքացին եմ ողջ աշխարհի	26.09.22թ	Դասղեկ
V	Մեզ պետք են տարբերություններ	03.10.22թ	Դասղեկ
VI	Բոլորս տարբեր ենք,բոլորս ապրում ենք միասին	10.10.22թ	Դասղեկ
VII	Բոլորս տարբեր ենք և դա մեր հարստությունն է	17.10.22թ	Դասղեկ
VIII	Բոլորս տարբեր ենք,բոլորս հավասարապես արժանի ենք հարգանքի	31.10.22թ	Դասղեկ
IX	Ինչ է կոնֆլիկտը	07.11.22թ	Դասղեկ
X	Կոնֆլիկտի առաջացման պատճառները	14.11.22թ	Դասղեկ
XI	Կոնֆլիկտի կառուցվածքը	21.11.22թ	Դասղեկ
XII	Կոնֆլիկտի զարգացման փուլերը	28.11.22թ	Դասղեկ
XIII	Վարվելակերպի ոճերը կոնֆլիկտային իրավիճակներում	05.12.22թ	Դասղեկ
XIV	Կոնֆլիկտների լուծման հնարավոր ելքերը	12.12.22թ	Դասղեկ
XV	Կոնֆլիկտների լուծման եղանակները	19.12.22թ	Դասղեկ
XVI	Կոնֆլիկտների խաղաղ լուծման պատվիրանները	09.01.23թ	Դասղեկ
XVII	Իմ տունը	16.01.23թ	Դասղեկ
XVIII	Մեր ընտանիքը	23.01.23թ	Դասղեկ
XIX	Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը	30.01.23թ	Դասղեկ
XX	Մեր երկրի օրհներգի ստեղծման պատմությունը	06.02.23թ	Դասղեկ
XXI	Մեր երկրի հերոսական անցյալը	13.02.23թ	Դասղեկ
XXII	Մարդիկ,որոնց հանդիպում եմ ամեն օր	20.02.23թ	Դասղեկ
XXIII	Իմ հայրենիքի պատմության հայտնի էջերը	27.02.23թ	Դասղեկ

XXIV	Արցախյան հերոսամարտը	06.03.23թ	Դասղեկ
XXV	Ազատամարտի հերոսները	13.03.23թ	Դասղեկ
XXVI	Մեր փոքրկ բարեկամները	20.03.23թ	Դասղեկ
XXVII	Ինչ է ընկերությունը և բաիեկամությունը	03.04.23թ	Դասղեկ
XXVIII	Ով է իմ ընկերը	10.04.23թ	Դասղեկ
XXIX	Ինչ է ազնվությունը	17.04.23թ	Դասղեկ
XXX	Ժպիտը մարդու կյանքում	08.05.23թ	Դասղեկ
XXXI	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին:	15.05.23թ	Դասղեկ
XXXII	Դպրոցական զանգ,ինչ խորհուրդ ունի այն	22.05.23թ	Դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		**2-րդ կիսամյակ**	
Շաբաթվա օրը	**Դասաժամը**	**Շաբաթվա օրը**	**Դասաժամը**
Երկուշաբթի	**7-րդ**		